Արձանագրություն N 2
Առողջության ապահովագրման ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված
թիվ «ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» «ապրիլ» 2025թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է **չորս** անդամից, և որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **չորս** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ **2025 թվականի ապրիլի 07-10-ը:**

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արտակ Կարապետյանը, իսկ քարտուղարն էր՝ Օֆելյա Կիրակոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին,
2. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին,
3. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին,
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին,
5. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և հայտարարելու մասին:

Կողմ` 4, դեմ` 0:

1. «ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն աղյուսակի՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Առողջության ապահովագրման ծառայություններ | **4 576 000** |

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգի հայտերը www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2025 թվականի ապրիլի 07-ին, ժամը 14:00-ին:**
2. Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
3. Հրավերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:
4. **«ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2»** ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

| Հ/հ | Ընտրված մասնակից | էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | **Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ** | info@ligainsurance.am |
| 2 | **Ինգո Արմենիա ԱՓԲԸ** | info@ingoarmenia.am |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. «ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին

1. Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| հ/հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժին 1՝Առողջության ապահովագրման ծառայություններ | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները | | |
| | | Արժեք (ինքնարժեք+շահույթ) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | **Ինգո Արմենիա ԱՓԲԸ** | 4, 356,000 | - | 4, 356,000 |
| 2 | **Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ** | 4,576,000 | - | 4,576,000 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից/ներ/ որոշելու մասին

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատել ընթացակարգի մասով Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

| Չափաբաժին 1՝ Առողջության ապահովագրման ծառայություններ | | |
|---|---|---|
| Մասնակցի զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը | Ընդհանուր գինը՝ ՀՀ դրամ |
| 1 | **Ինգո Արմենիա ԱՓԲԸ** | 4, 356,000 |
| 2 | **Լիգա Ինշուրանս ԱՓԲԸ** | 4,576,000 |

Ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ **Ինգո Արմենիա ԱՓԲԸ-ին:**

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. «ՁԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-25/2» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և հայտարարելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ սահմանվում է անգործության ժամկետ 10 օրացուցային օր, որից հետո Ընտրված մասնակցին կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

*Հանձնաժողովի նախագահ*

Արտակ Կարապետյան

*անդամներ՝*
Անտոն Ղասաբյան

Գևորգ Հակոբյան

Աշոտ Աղրամանյան

*քարտուղար՝*
Օֆելյա Կիրակոսյան